<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ ՀՄ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՄԻՐԶՈՅԱՆ ԼԻԼԻԹ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԵԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….……..…….3

Գլուխ 1. . *Ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրումը*

1.1 Ընտանիքն ու դպրոցը երեխայի դաստիարակության գործընթացում …..…...…….5

1.2 Ուսուցիչ–ծնող համագործակցության անհրաժեշտությունը դպրոցում……..…….13

Գլուխ 2. *Հետազոտական աշխատանք*

2.1Հետազոտության ընթացքը և նպատակը……...…..…..……..…17

Եզրակացություն……..…...……22

Օգտագործված գրականության ցանկ……...……..…24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխայի ձեռքբերումների հաջողությունը կախված է նրանից, թե ով եւ ինչպես է ազդում նրա զարգացման վրա: Ծնողները եւ ուսուցիչները երկու ամենահզոր ուժերն են, որոնց դերը յուրաքանչյուր մարդու անհատականության ձեւավորման գործընթացում չի կարելի թերագնահատել Առանց ընտանիքի օգնության դպրոցը չի կարող ապահովել կրթության բարձր արդյունքներ Որքան շատ են ուսուցիչները ներգրավում ծնողներին, այնքան մեծանում է մոտիվացիան, դրական վարքագիծը եւ լավ գնահատականները:

Դպրոց-ընտանիք համագործակցությունը դրական արդյունք կունենա, եթե կիրառվեն համագործակցության տարբեր ձեւեր, հանրակրթական հաստատություններում ստեղծվեն պայմաններ, ինչի շնորհիվ ընտանիքը կդիտվի որպես սուբյեկտ կրթական գործունեության մեջ, կազմակերպվի ծնողական կրթություն:

Ուսուցիչների եւ ծնողների համագործակցությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխային, նայել նրան տարբեր տեսանկյուններից, տեսնել նրան տարբեր իրավիճակներում եւ, հետեւաբար, օգնել հասկանալ նրա անհատական հատկանիշները, զարգացնել երեխայի կարողությունները, հմտությունները, համատեղ աշխատանքի շնորհիվ հեշտությամբ հաղթահարել ուսումնական դժվարությունները, եւ իհարկե ազդեցություն ունենալ կրտսեր դպրոցականների առաջադիմության վրա, ինչը կարեւոր հենք է համարվում բանիմաց հասարակություն ունենալու համար:

Դպրոցականների կրթական գործունեության արդյունքների գնահատումը միշտ եղել է եւ կլինի կարեւոր թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողների, համար Սովորելու դժվարությունները, որոնք ի հայտ են գալիս տարրական դասարաններում երեխաների մոտ, ազդում են հիմնական դպրոցական ծրագրի նրանց հետագա հաջող զարգացման վրա: Հենց տարրական դասարաններում է դրվում գիտելիքի համակարգի հիմքը, եւ առանց այդ հիմքի կրտսեր դպրոցականը դժվարություններ է ունենում ուսումնական նյութը յուրացնելու հարցում, իսկ միջնակարգ դպրոցում նա կարող է «դուրս գալ» ուսումնական գործընթացից Դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում ուսուցիչը: Նա իր ժողովրդի

այն զինվորն է, որի զենքը գիտությունն է: Նա տիրապետում է մարդ դաստիարակելու արվեստին: Իր գործին նվիրված ուսուցչի ամբողջ կյանքն անցնում է սերունդներին կրթելու և դաստիարակելու նորանոր ուղիների որոնման մեջ:

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորույթների, մշակույթի, դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման, կայացման հարցում: Ընտանեկան դաստիարակությունը մշտական և շարունակական է: Այն իր ազդեցությունն է թողնում մարդու վրա ողջ կյանքի ընթացքում: Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում երեխան է, ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում:

Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, եթե այն ինչ սկսվում է դպրոցում, շարունակվում է տանը, այն ինչ կատարվում է ընտանիքում, հաշվի է առնվում դպրոցում, ուրեմն աշակերտի լիարժեք դաստիարակությունը ապահովված է: Սրանով է պայմանավորված մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝

1. Դպրոց-ընտանիք համագործակցության առանձնահատկությունների բացահայտումն ու դրանց արդյունավետության բարձրացմանը նպաստող քայլաշարի մշակումն է:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել և վերլուծել համապատասխան գրականություն:
2. Բացահայտել ժամանակակից ընտանիքի և դպրոցի համագործակցության առանձնահատկությունները:
3. Ուսուցիչների, ծնողների շրջանում անցկացնել հարցումներ:
4. Մշակել ընտանիք-դպրոց համագործակցության արդյունավետության բարձրացմանը նպաստող քայլաշար

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

1.1 ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԴՊՐՈՑԸ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրումը: Հասարակության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում անհրաժեշտություն է առաջանում վերագնահատել տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող պատկերացումները կրթության եւ դաստիարակության գործառույթների, դպրոցի եւ ընտանիքի փոխազդեցության մասին Ընտանիքը պետք է գնահատվի որպես մանկավարժական գործընթացի ակտիվ սուբյեկտ, եւ ընտանիքի եւ դպրոցի միջեւ համագործակցությունը պետք է կառուցվի ստեղծագործական, հումանիստական մանկավարժության գաղափարի հիման վրա [14]:

Կրթության մեջ դպրոցի եւ ընտանիքի հաջող փոխգործակցության համար անհրաժեշտ է, որ ծնողները կարողանան վերլուծել իրենց երեխաների գործունեությունն ու վարքագիծը, նրանց դաստիարակությունը: Վաղ մանկության շրջանում երեխան հիմականում դաստիարակվում է ընտանիքում, որտեղ էլ ձևավորվում են նրա հետաքրքրությունները, պահանջմունքները, հակումները, բնավորության գծերը ու անձնային որակները, դրվում են նրա արժեքների, իր կյանքի արժեքների հիմքը: Յուրաքանչյուր ընտանիք կյանքի յուրովի ճանապարհ է անցնում: Անկասկած, ծնողների ձեռքբերումներն ու հաջողությունները, ձախողումները ու դժվարությունները իրենց ազդեցությունն են թողնում երեխայի կյանքի, մանկության վրա: Դժվարություններ ու խոչընդոտներն ավելի լավ են հաղթահարում այն ընտանիքները, որոնք համերաշխ են, միասնական, որտեղ տիրում է սերն ու հարգանքը ընտանիքի ցանկացած անդամի նկատմամբ[3;64]:

Ուստի միանշանակ կարող ենք ասել, որ ընտանեկան դաստիարակության ազդեցությունը միջավայրի բոլոր ազդեցություններից ամենազորն է և միակն է, որ կարող է մարդու տարիքի հետ թուլանալ, սակայն երբեք չի վեանում: Իզուր չէ, որ մեր ժողովրդի մեջ տարածված է այն միտքը, որ յուրաքանչյուր երեխա, մարդ իր ընտանիքի հայելին է: Այդ հանգամանքը մեզ բերում է այն համոզման, որ

յուրաքանչյուր մանկավարժ դպրոցական դաստիարակությունը պետք է կառուցի կոնկրետ երեխայի ընտանեկան դաստիարակության ուսումնասիրման հիման վրա՝ դրա դրական կողմերը հզորացնելու և բացասական կողմերը չեզոքացնելու նպատակով:[4;122]

Ընտանիք, ընտանեկան միջավայր: Ընտանեկան միջավայր ասելով մենք նկատի ունենք ընտանիքի անդամների փոխհարաբերությունները և սովորությունները, նրանց աշխատանքը և վերաբերմունքը հասարակական կյանքի երևույթների նկատմամբ: Դա երեխայի համար ամենահարազատ միջավայրն է, այստեղ են սկսում զարգանալ նրա ֆիզիկական և հոգեկան ուժերը, այստեղ է նա ստանում առաջին տպավորություններն ու մտապատկերները կյանքի վերաբերյալ: Մինչև մանկապարտեզ կամ դպրոց հաճախելը փոքրերի համար ընտանիքը հանդիսանում է գրեթե միակ հասարակական միջավայրը, ու խարսխվում են նրանց առողջության և բնավորության հիմքերը, ուր զարգանում են նրանց հարցասիրությունը, ուր ձևավորվում են նրանց վարքի որոշ հմտությունները:

Ընտանիքը հասարակության այն ինսիտուտներից է, որը նշանակալի դեր ունի աճող սերնդի զարգացման և դաստիարակության գործում: Ընտանիքում է մարդը ձեռք բերում կենսական գիտելիքներ, հաղորդակցական, համագործակցային, կարողություններ:

Անհերքելի է, որ երեխաների դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ընտանիքը: Այստեղ ծնողները աշխատում են զարգացնել երեխաների ընդունակությունները, հետևել նրանց առողջությանը և ձևավորել նրանց բարոյական հատկությունները:

Ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի վրա դրսևորվում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթով, նրա անդամների օրինակի և խոսքի միջոցներով: Ընտանիքը, որպես հասարակական մի բջիջ առհասարակ կապված է հասարակական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձությունները իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Ծնողների լավատեսությունը, հայրենասիրությունը, նրանց կենսուրախությունը և հասարակական ակտիվությունը ընտանեկան միջավայրը դարձնում են կենսուրախ և հասարակայնորեն առողջ: Լուրջ նշանակություն ունի նաև ընտանիքի կյանքի

կազմակերպվածությունը, որոշակի կարգ ու կանոնը, սովորույթները, ավանդույթները, բնակարանի տեսքը նույնպես որոշում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթը: Եթե ընտանիքում գոյություն ունի որոշ կարգ ու կանոն, քնից արթնանալու, նախաճաշի, ճաշի, ընթրիքի ժամանակ և այդ դարձել է կենցաղ, եթե ստեղծված են որոշ կայուն ավանդույթներ կապված ծննդյան տարեդարձի, տոն և կիրակի օրերին զբոսանքի գնալը, եթե բնակարանը ձևավորված է պարզ, ճաշակով, պահվում է միշտ հավաքված և մաքուր՝ նշանակում է ընտանիքի կյանքը կազմակերպված է: Այս ամենը երեխայի մեջ առաջ են բերում կարգապահություն, ճշտապահություն ընտանիքի նկատմամբ պատվի և սիրո զգացմունք և հակառակը:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոցներից է նաև ընտանիքի անդամների անձնական օրինակը: Վաղուց հայտնի է, որ երեխայի բնությանը հատուկ է ընդօրինակելը: Երեխան մշտապես դիտում է իրեն շրջապատող մարդկանց, նրանց գործերը, տեսնում է նրանց վերաբերմունքը մյուս մարդկանց ու երևույթների նկատմամբ և աննկատելիորեն ընդօրինակում: Սակայն երեխան ընդօրինակում է ոչ միայն դրականը, այլև բացասականը: Երբեմն ծնողները տեսնելով երեխայի այս կամ այն բացասական հատկությունները, մնում են զարմացած, այնինչ դրանց արմատները շատ հաճախ գտնվում են ընտանիքում, ծնողների արարքներում:

Հետևություն՝ ծնողների խնդիրն է՝ աշխատել, որպեսզի ընտանեկան միջավայրում տիրապետի դրական օրինակը, այդ դեպքում միայն հնարավոր է ապահովել ընտանեկան միջավայրի բարերար ազդեցությունը երեխայի զարգացման գործում:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե՛ կրտսեր, թե՛ ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորությունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևոր դեպքերի մասին: Խոսքի օգնությամբ քննարկվում են բազմազան հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:

Ծնողները պարտավոր են աշխատել, որպեսզի խոսքը ընտանիքում դրական ազդեցություն ունենա: Չպետք է մոռանալ, որ երեխաները լսում են ընտանիքի անդամների խոսքը և համապատասխան ազդեցություն կրում: Ուստի պետք է լուրջ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր խոսքի վրա, ձգտել, որ այն համապատասխանի մեր դաստիարակության պահանջներին:

Գաղտնիք չէ, որ ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ փոխանցողը ընտանիքն է: Սա այն սրբազան վայրն է, ուր թրծվում է անհատի նկարագիրը: Ընտանիքում է մարդն ստանում հոգևոր և բարոյական նախնական դաստիարակությունը: Ուստի խիստ կարևոր է հոգևոր-բարոյական այն մթնոլորտը, որի մեջ մեծանում է անհատը, որովհետև բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստավոր պայմաններ է ապահովում իբրև քրիստոնյա նրանց բարոյական, անձնային որակների ձևավորման համար: Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը մարդ կերտելու գործընթացն է, ոչ սոսկ իբրև ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների խտացում:

Եթե անհատը մեծանում է բարոյական ամուր հիմքերի վրա գտնվող, սիրո, փոխհամաձայնության և հարգանքի մթնոլորտ ունեցող ընտանիքում, բնական է, որ այն իր անշեղ ու անխախտ կնիքը, դրոշմը կդնի նրա հոգու ու սրտի վրա՝ նրա մեջ իսկական Մարդ կերտելով: Ու թեև որոշակի տարիքից հետո արդեն ընտանիքից դուրս անհատը մտնում է արդեն այլ միջավայր (բակ, դպրոց և այլն), սակայն այն հիմնավոր կրթությունն ու դաստիարակությունը, որը նա ստացել է մայրական անխարդախ կաթի հետ՝ ծննդյան առաջին իսկ օրվանից, արդյունավորվում ու պտղաբերում է արդեն հասուն տարիքում: Մանկական տարիքը նման է սպիտակ թղթի, որի վրա մի անգամ դրոշմվածն անջնջելի է մնում: Ըստ Սուրբ Հովհ. Ոսկեբերանի՝ «Ինչպես կնիքն է դրոշմվում մեղրամոմի վրա, այնպես էլ երեխաների հոգում այն, ինչ լսում են»: Մինչդեռ մարդուն կրթելիս նրա մեջ նախ պետք է սերմանել մարդասիրության, բարության, մարդուն մարդ դարձնող բոլոր այն առաքինությունները, որոնք ժամանակին պտուղ են տալիս: «Մարդուն պետք է Մարդ դաստիարակել: Բայց մարդուն մարդ է պետք, որ մարդուն մարդ դարձնի: Եթե մարդը մարդ չլինի, մարդուն մարդ չի դարձնի»

(Պողոս Ադրիանուպոլսեցի): Ուրեմն ծնողները նախ իրենք պետք է այդ արժեքների կրողները լինեն՝ իրենց կյանքով օրինակ դառնալով զավակների համար:

Դպրոցի դերը՝ դաստիարակության գործընթացում: Դպրոցը միայն վայր չէ, որտեղ գալիս են մեծացող երեխան, որպեսզի գիտելիք ստանա: Այն մեծ ժամանակահատվածն է, որտեղ երեխան ապրում է: Երեխայի դաստիարակության գործում անասելի նշանակություն ունի դպրոցը: Դպրոցում է երեխան անցկացնում իր ժամանակի մեծ մասը: Շատ դեպքերում, երբ երեխան սկսում է դպրոց հաճախել, ծնողների մոտ այնպիսի համոզմունք է ձևավորվում, թե դաստիարակության ծանր բեռը տեղափոխվել է դպրոցի և ուսուցչի վրա, նրանք գտնում են, թե երեխայի դաստիարակության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է դպրոցի վրա, ու երեխայի կատարած ամեն մի սխալ, ամեն բացթողում կապված է դպրոցական դաստիարակության թերությունների հետ [2;124]:

Սակայն դպրոցում դաստիարակչական ներգործությունը երբեք միայնակ լինել չի կարող, այն մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ, հակառակ դեպքում թե՛ մեկը, թե՛ մյուսը դրական արդյունք տալ չեն կարող: Դպրոցում դաստիարակությունը ուղեկցվում է մի շարք ուղղություններով՝ ուսուցմամբ, գնահատականներով, և հասակակիցների հետ փոխադարձ շփմամբ: Դպրոցական ուսուցումը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են ունակությունը, հետաքրքրասիրությունը, պահանջկոտությունը և բնավորության մի շարք այլ գծեր:

Դաստիարակչական աշխատանքը հիմնականում նպաստում է երեխայի մոտ ավելի շատ ինֆորմացիա ունենալու, լայն և խորը ճանաչողական հետաքրքրությունների, ինքնակրթության, ինքնազարգացման պահանջմունքների ձևավորմանը:

Դաստիարակության բուն էությունը աշակերտներին և նրանց զգացմունքներին ճիշտ ուղղություն տալն է: Ռուս մանկավարժ Պիսարևն ասել է. «Դաստիարակության մեջ ամբողջ գործն այն է, թե ով է դաստիարակում»: Դասարանի անդամները սեփական ընտանիքների յուրատիպ արտացոլումն են, և մեծ ուժ է անհրաժեշտ, որպեսզի դասարանում ուսուցիչն ստեղծի միասնական

առողջ մթնոլորտ: Այդ կոլեկտիվի միջանձնային ներդաշնակ հարաբերությունները կնպաստեն առաջադիր նպատակների իրականացմանը և հաջողությունների ձեռքբերմանը: Այս ասպարեզում յուրաքանչյուր անհատ իրեն զգում է լիիրավ գործող անդամ և ամեն պարագայում պատասխանատու անձ: Դասարանի յուրաքանչյուր ոք կձգտի խորհրդակցել, իր հաջողություններով ուրախացնել, կամ դժվարությունները կիսել հարազատ դարձած մարդկանց հետ: Ուսուցչի պարտքն է՝ ճանաչել ու հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները, պաշտպանել նրանց՝ դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում: Այս բոլոր գործոնները երեխաներին կհաղորդեն պաշտպանվածության զգացում և ինքնավստահություն, կստեղծեն ստեղծագործնական ակտիվություն ու լիարժեք զարգացում: Մանկավարժության մեծագույն նվաճումը ոչ միայն դաստիարակության զարգացման տեսական մոտեցումների մշակումն է, այլև առկա հիմնախնդիրների գործնական լուծումների արդյունավետ փորձերը: Դաստիարակչական ներգործությունը մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: Հակառակ դեպքում թե՛ մեկը, թե՛ մյուսը դրական արդյունք չեն կարող տալ: Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝ ուսուցում, գնահատում և հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում:

Երեխայի դաստիարակության գործընթացում դպրոց և ընտանիք համագործակցությունը արդիականացնելու և արդյունավետ դարձնելու համար պիտի հաշվի առնել ժամանակակից հասարակության մեջ կատարվող փոփոխությունները, հասարականկան բարեփոխումները, որոնք անմիջապես անրադառնում են ինչպես դպրոցի, այնպես էլ ընտանիքի վրա[3;183]:

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը: Որպես մի շարք գործոնների և ազդեցությունների համակցություն այն ուղեկցում է մարդուն՝ ծնված օրից մինչ չափահասություն: Կրթության համար պատասխանատվություն են կրում ընտանիքը և դպրոցը: Այդ տեսակետից բացարձակ անհրաժեշտություն է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև հաղորդակցման բարելավումը և նրանց իրական համագործակցության

կառուցումը: Եթե մենք իսկապես ուզում ենք բավարարել մեր հասարակության կրթական կարիքները, անհրաժեշտ է սովորողների ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել ընդհանրական և արդյունավետ դարձնելու նպատակով: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ինչպես Վ. Հյուգոն էր ասում. «Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ և կազմում նրա անկապտելի մասը»:

Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների և ուսուցիչների հետ: Ծնողները երեխայի առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ՝ իրենց երեխաների կյանքի, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար: Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական տարիքի երեխաների կրթության համար:

Դպրոցական ուսուցումը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են՝ հետաքրքրասիրությունը, ուշադրությունը, պահանջկոտությունը և բնավորության մի շարք այլ գծեր: Դաստիարակչական աշխատանքը հիմնականում նպաստում է երեխայի լայն և խոր ճանաչողական հետաքրքրությունների, ինքնակրթության, ինքնազարգացման պահանջմունքների ձևավորմանը:

Դպրոցի մանկավարժական մեթոդների հիմքում ընկած են երեխայի ազատ մտածողության, վերլուծական, ստեղծագործական մտածողության, տրամաբանության, ինչպես նաև արագ կողմնորոշվելու ունակության զարացումը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կարևորը ճիշտ դաստիարակության սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Դաստիարակության հաջողությունն ապահովող

առաջին պայմանը համերաշխ ընտանիքն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ, հոգատար, հանգիստ, հավասարակշռված և ուրախ մարդիկ: Իսկ պետությունը պարտավոր է որդեգրել մի այնպիսի կրթական համակարգ, որը կապահովի մարդու ամբողջ կյանքի ուսումնառությունը և անձնական զարգացման համար անհրաժեշտ հիմքեր[17;125]: Ընտանիքում երեխաները նույնպես ունեն իրենց պարտականությունները և պատասխանատվությունը: Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և ընտանիքներում, և դպրոցներում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Ո'չ ծնողները, ո'չ ուսուցիչները չեն կարող մեկուսացված փոխանցել այն բոլոր գիտելիքները, հմտությունները և արժեքները, որոնք անհրաժեշտ են երիտասարդներին՝ հասարակության մեջ պատշաճ կերպով ինտեգրվելու համար: Եվ ընտանիքը, և դպրոցը երկուստեք հաճախ սկսում են կորցնել կողմնորոշումը՝ կանգնելով այնպիսի բարդ խնդիրների առաջ, ինչպիսիք են՝ գերտեղեկատվությունը և զանգվածային լրատվության միջոցների կողմից առաջարկվող այլընտրանքային մոդելները: Այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը: Ուսուցիչ-ծնող ճիշտ փոխհարաբերությունները նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Հենց առաջին օրից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ:

Ժամանակի մեծ մտավորականներից մեկն ասել է. «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն»:

1.2 ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ներկայումս առաջնային կարևորություն է ձեռք բերել երեխայի դաստիարակության կազմակերպումը՝ ընտանիքի և դպրոցի սոցիալական գործընկերության հիմքով: Երեխայի դաստիարակության գործում մարդասիրական միջավայրի ստեղծման անհրաժեշտությունն ուսուցիչների և ծնողների առջև նոր խնդիր է դնում անհրաժեշտ մանկավարժական գործողությունների ընտրության հարցում: Ընտանիքն ու դպրոցը հավասարապես պատասխանատու և շահագրգիռ են յուրաքանչյուր դպրոցի ու ընդհանրապես կրթության տարածաշրջանային համակարգի աշխատանքի որակի համար:

Դպրոցի մանկավարժական խորհրդի գործունեության արդյունավետությունը որոշվում է ծնողների հետ տարվող աշխատանքների կազմակերպման հմտություններով:

Կրթական հաստատությունների կառավարման խորհուրդներում ընդգրկված են ոչ միայն կրթական գործընթացի «իրական» կազմակերպիչները, այլև աճող սերնդի որակյալ կրթությամբ շահագրգիռ լայն հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչները: Սա դպրոցի և հասարակության իրական համաձայնության կայացման իրական ձև է:

Հանրակրթական դպրոցը, ինչպես կրթության մյուս մակարդակները, սոցիալական պատվեր է կատարում և մանկավարժները պետք է լսեն հասարակության ձայնը, իմանան նրա կարծիքը կրթության որակի մասին: Ազգաբնակչության մեծ մասը, որը կապված է դպրոցի և կրթության այլ հաստատությունների հետ, սովորողների ծնողներն են:

Վստահաբար պետք է ասել, որ երեխայի՝ որպես դաստիարակության սուբյեկտ, ձևավորումն առաջին հերթին սկսվում է ընտանիքում: Հենց ընտանիքում են դրվում նրանց սոցիալականացման և անձնային որակների ձևավորման հիմքերը: Դպրոցը՝ ի դեմս ուսուցչի և դասղեկի, կոչված է կատարելագործելու, զարգացնելու դրանք՝ ստեղծելով հատուկ կազմակերպված միջավայր:[7;46]

Երեխայի հետազոտման նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում ընկած են միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանքն է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Միաժամանակ կան հիմնախնդիրներ որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, դրանց փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը[6;131]: Դպրոցի և ընտանիքի համագործակցության և

փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է: Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը: Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակները խիստ անհրաժեշտ են: Մակավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակ, և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը:

Դպրոցի և ընտանիքի միացյալ գործունեությունը գլխավոր պայմաններից մեկը դա աճող սերնդի դաստիարակությունն է: Դպրոցի հետ միասին ընտանիքը լուծում է ընտանեկան և հասարակական դաստիարակության խնդիրները: Երեխաների մարդասիրական դաստիարակումը անհնարին է առանց մանկավարժների և ծնողների համաձայնեցված գործունեության, որը ուղղված է երեխայի անձի զարգացման, անձնական հատկանիշների ձևավորման վրա:

Երեխայի կյանքը բաղկացած է երկու կարևոր ոլորտներից՝ դպրոց և ընտանիք, որոնք ենթարկվում են փոփոխման, զարգացման: Հասարակության զագացման ներկա փուլում ընտանեկան արժանիքների կորուստը դարձել է ժողավրդագրական խնդիրների կարևոր պատճառներից մեկը: Այդ իսկ

պատճառով կրթության կարևոր և ակտուալ խնդիրներից մեկն է դպրոցի և ընտանիքի համագործակցությունը:

Դաստիարակման խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն ընտանիքի և դպրոցի փոխազդեցության պայմաններում: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը դառնում է ավելի ակտուալ և պահանջված: Երկու կողմերն էլ ներկայացնում են իրենց, երբեմն արդար պահանջները: Այսպես, ուսուցիչները բողոքում են ծնողների մոտ իրենց երեխաների դպրոցական կյանքի նկատմամբ հետաքրքրության բացակայության համար, բարոյական արժեքների բացակայություն, պասիվություն: Ծնողներն էլ, իրենց հերթին, դժգոհում են չափազանց ծանրաբեռնվածության, ուսուցիչների անտարբերության, մանկական կոլեկտիվում փոխներգործության համար:

Բարեփոխումների ժամանակ կրթական համակարգը այնքան արագ է փոխվում, որ ծնողները հաճախ բավարար պատկերացում չունեն այդ փոփոխությունների վերաբերյալ, կրթադաստիարակչական գործունեության մեջ գլխավորապես կողմնորոշվելով իրենց սեփական դպրոցական փորձով, որը հաճախ ետ է մնում ժամանակակից պահանջներից: Այս անհամաձայնության լուծման համար մանկավարժին անհրաժեշտ է դարձնել ուսումնա-դաստիարակչական պրոցեսը ծնողների համար մաքսիմալ բաց, տեղեկացված և հասանելի:

Համակարգելով դպրոցի և ընտանիքի ջանքերը նշանակում է վերացնել հակասությունները, ստեղծել համատարր դաստիարակչական և զարգացնող միջավայր: Ընտանիքի և դպրոցի փոխներգործությունը հիմվում է ընդհանուր նպատակի վրա՝ ձևավորել աշխատակցային հարաբերություններ մանկավարժական պրոցեսի բոլոր մասնակիցների միջև:

Ընտանիքի և դպրոցի փոխներգործության ընդհանուր խնդիրն է ապահովել որակյալ կրթություն, աշխատանքը երեխաների մասնագիտական կողմնորոշման համար, բարոյականության և վարքագծի կանոնների դաստիարակում, առողջ ապրելակերպի նկատմամբ պահանջի ձևավորում:

Ընդհանուր խնդիրների լուծմանը նպաստում է կոմպլեքսային մոտեցումը մասնավոր մանկավարժական խնդիրների լուծման համար՝ ձևավորել ծնողների

մոտ իրենց դերի մասին ճիշտ պատկերացումներ երեխայի դաստիարակության համար, դպրոցի կրթադասիարակչական պրոցեսին մասնակցության անհրաժեշտություն, մանկավարժահոգեբանական մշակույթի ձևավորում, մանկավարժների մոտ ընտանիքի հետ համագործակցության կարևորության հասկացության ձևավորումը, մանկավարժների դերի կարևորությունը ծնողների և երեխաների միջև մարդասիրական հարաբերությունների ձևավորումը, մանկավարժների մոտ ընտանիքի ուսումնասիրության մեթոդների յուրացումը, ծնողների հետ փոխներգործության տրամախոսական և աշխատակցային ձևերի յուրացումը, ծնողների և երեխաների միացյալ գործունեության կազմակերպման ձևերի յուրացումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Հասարակության քաղաքակիրթ լինելու մակարդակը, պետության հեղինակությունը այսօր ուղղակիորեն կախված է այդ հասարակությունում ապրող երեխաների ապագայի նկատմամբ գրված դիրքից: 20-21-րդ դարերի խոշոր սոցիալական փոփոխությունները մեծ ազդեցություն գործեցին ընտանիքի և դպրոցի կողմից իրականացվող դաստիարակչական գործընթացների վրա: Այս իմաստով հասարակության զարգացման արդի փուլում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացներն իրենց խորը կնիքն են դրել ընտանիքում արդյունավետ դաստիարակության՝ որպես անձի ձևավորման ու զարգացման սոցիալական գործոնի վրա:

Երեխայի արդյունավետ դաստիարակության կարևոր պայման է ընտանիքի բոլոր անդամների ընդգրկվածությունը նրա կրթման գործընթացում, այսինքն՝ ծնողների և մանկավարժների համագործակցությունը, գործունեության համատեղ պլանավորումը, իրականացումը և արդյունքների գնահատումը, ինչը նպաստում և ապահովում է նաև ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Ուստի այսօր դպրոց-ընտանիք,

ծնող և մանկավարժ փոխհարաբերությունները բավարար չափով հետազոտված չեն, ու առավել ևս մշակված չեն, ինչը և մեր հետազոտությունը դարձնում է հրատապ և պայմանավորում նրա արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ընտանիք-դպրոց համագործակցության առանձնահատկությունները

Հետազոտության խնդիրներն են.

. Բացահայտել դպրոցում ընտանիք-մանակավարժ փոխհարաբերություններն արդի պայմաններում

. Բացահայտել ծնող-դասղեկ համագործակցության արդյունավետությունը:

Հետազոտությունն անցկացվել է հետևյալ հաջորդականությամբ՝

1. Նախնական ծանոթություն ծնողների և մանկավարժ/դասղեկների հետ հանրակրթական դպրոցում,
2. Փորձարարական աշխատանքի ժամանակացույցի կազմում, մեր կողմից ընտրվել է ուսուցման 1-ին կիսամյակը,
3. Հետազոտության համար համապատասխան մեթոդների և թեստերի ընտրություն: Հարցերը կազմելիս հաշվի են առնվել հետևյալ պահանջները՝

✓ Ներկայացվել են այնպիսի հարցեր, որոնց ծնողները և դասղեկներն ի վիճակի են պատասխանել:

✓ Հարցերը ձևակերպված են պարզ և հստակ:

4. ՈՒսումնասիրման նախնական արդյունքների ներկայացում ծնողներին և դասղեկներին:
5. Արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն եվ ամփոփոում

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու մի շարք հետաքրքիր օրինաչափություններ: Մեր ուսումնասիրած դպրոցում ընտանիք-դպրոց գործունեությունը իրականացվում է գրեթե կիսով չափ, մասնավորապես թերի է ընտանիք-դպրոց կապի ապահովման, ընտանիքի առանձնահատկությունների ուսումնասիրման, ընտանիքի որևէ անդամի հետ

համագործակցության, սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքը:

Հետազոտական աշխատանքի համար նախատեսված են եղել հետևյալ հարցերը.

1. Կարևորու՞մ եք մանկավարժ-ծնող կապը:
2. Համագործակցու՞մ եք դաստիարակության գծով փոխտնօրենի հետ:
3. Համագործակցու՞մ եք դպրոցի որևէ անդամի հետ երեխային աջակցություն ցույց տալու համար:
4. Մասնակցու՞մ եք անապահով երեխաներին անհատական աջակցություն ցուցաբերելու գործընթացին:
5. Մասնակցու՞մ եք ծնողական ժողովներին:
6. Օգնու՞մ եք ուսուցչին ագրեսիվ վարք ունեցող երեխայի դաստիարակության գործընթացում:
7. Իրազեկու՞մ եք երեխային՝ իր, որպես աշակերտի, իրավունքների և պարտականությունների մասին:
8. Օգնու՞մ եք երեխային հետևել դպրոցի կարգ ու կանին:
9. Համագործակցու՞մ եք հատուկ մանկավարժի, լոգոպեդի, հոգեբանի հետ:
10. Հետևում եք երեխայի առաջադիմությանը և այլն:

Գծապատկեր 2.1

Դպրոց-ընտանիք համագործակցությունը բացահայտող թեստի արդյունքները



Հարցմանը մասնակցած 30 ծնողներից 60%-ը ապահովում է ընտանիք-դպրոց կապը, 70%-ը կարևորում է մանկավարժ-ծնող կապը, ծնողների միայն 35%-ն է համագործակցում դաստիարակության գծով փոխտնօրենի հետ, 20%-ը համագործակցում է դպրոցի որևէ անդամի հետ երեխային աջակցություն ցուցաբերելու համար, 50%-ը է միայն համագործակցում անապահով երեխաներին անհատական աջակցություն ցուցաբերելու գործընթացում, 90%-ը մասնակցում է ծնողական ժողովներին, ծնողների միայն 60%-ը օգնում է ուսուցչին ագրեսիվ վարք ունեցող երեխայի դաստիարակության գործընթացին, 90%-ը իրազեկում է երեխային իր՝ որպես աշակերտի իրավունքների և պարտականությունների մասին: 75%-ը օգնում են երեխային դպրոցի կարգ ու կանոնին հետևելուն, հարցմանը մասնակցած ծնողների միայն 50%-ը է համագործակցում և օգնում է հաղթահարել դպրոցական դժվարությունները, հատուկ մանկավարժի, լոգոպեդի, հոգեբանի հետ, 70%-ը հետևում է երեխայի

վարքագծին, 70%-ը հետևում է երեխայի առաջադիմությանը, 90%-ը օգնում է երեխային մասնագիտական կողմնորոշման հարցում:

Այսպիսով՝ դպրոց-ընտանիք փոխներգործության ուումնասիրության ընթացքում եկանք այն եզրահանգման, որ ծնողների կողմից հիմնական ուշադրությունը դարձվում է երեխաների առաջադիմությանը, երեխաների իրավունքների և պարտականությունների իրազեկմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժա-հոգեբանական գրականության վերլուծությունը և հետազոտական աշխատանքի արդյունքները թույլ են տալիս նշել որ.

➢ Ծնողների հետ մանկավարժի աշխատանքը ուսուցչի կարևոր գործառույթներից մեկն է: Հետևաբար այն պետք է նախապես ծրագրվի, նպատակադրվի և իրականացվի հաջորդաբար ու ամենայն պատասխանատվությամբ:

➢ Ընտանիք-դպրոց համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է՝

✓ Այն ամենը ինչ սկսվում է դպրոցում, շարունակել տանը:

✓ Օգնել ծնողներին ընտանիքում ստեղծել երեխայի առողջության պահպանմանն ուղղված բարենպաստ ֆիզիկական և բարոյահոգեբանական մթնոլորտ:

✓ Ծնողներին ծանոթացնել մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, երեխայի զարգացման ու դաստիարակության ժամանակակից մոտեցումներին:

✓ Օգնել ծնողներին ավելի լավ ճանաչել սեփական երեխային, նրա ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու նպատակով:

Որ յուրաքնչյուր դպրոցում անհրաժեշտ է ունենալ ընտանիք-դպրոց համագործակցության քայլաշար՝ հստակ նպատակներով: Այսպես օրինակ.

1. Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում:
2. Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում:
3. Դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:
4. Ծնողների հետ ավանդական աշխատանքի ձևերի կատարելագործում , ծնողական ժողովների պարբերաբար կազմակերպում, անհատական զրույցների, խորհրդատվությունների անցկացում:
5. Ծնողական խորհուրդների ակտիվ մասնակցության ապահովումը

դասարանական և դպրոցական գործերին, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին՝ հաշվի առնով ծնողների մասնագիտությունն ու ներուժը:

6. Ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ մասնագիտական կողմնորոշմանը ուղղված միջոցառումների պարբերաբար անցկացում:

7. Դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունների խրախուսում: Դպրոցի կամ դասարանի «լավագույն ծնող», «դպրոցի լավագույն բարեկամ-ընտանիք» մրցույթների պարբերաբար անցկացում:

8. Ծնողների մանկավարժա-հոգեբանական, առողջագիտական գիտելիքները հարստացնելու նպատակով՝ դպրոցում «Ծնողական համալսարան»ի ծնողական խորհրդի ստեղծում :

9 Աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ ծնողական խորհրդի կապի ամրապնդում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղուզումցյան Գ. Վ., «Ընտանիքի ազդեցությունը կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման գործում», «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-որ դարի մարտահրավերները. կանխման և հաղթահարման ուղիները» գիտաժողովի նյութերի ժողովածու. Եր: Մանկավարժ, 2016, 209էջ
2. Դալլաքյան Ա. Մ. «Ընտանիք-դպրոց համագործակցության արդյունավետ ձևերը», «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-որ դարի մարտահրավերները. կանխման և հաղթահարման ուղիները» գիտաժողովի նյութերի ժողովածու. Եր: Մանկավարժ, 2016, 209 էջ
3. «Թոփուզյան Ա. Օ. «Ընտանեկան և դպրոցական դաստիարակության ինտեգրումը արդիական պահանջ է», «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-որ դարի մարտահրավերները. կանխման և հաղթահարման ուղիները» գիտաժողովի նյութերի ժողովածու. Եր: Մանկավարժ, 2016, 209 էջ
4. Թոփուզյան Ա. Օ. «Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ», Եր. 2009թ, 241 էջ
5. Կովալյովա Ա.Գ. «Ընտանեկան դաստիարակության հոգեբանություն», Եր. 1980թ., 332 էջ
6. Մարտիրոսյան Ն. Հ. «Ծնողական ժողովներին ներկայացվող ժամանակակից պահանջները», «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-որ դարի մարտահրավերները. կանխման և հաղթահարման ուղիները» գիտաժողովի նյութերի ժողովածու. Եր: Մանկավարժ, 2016, 209 էջ
7. Ջանիկյան Ս., «Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում», ԿԳՆ, «Նախաշավիղ», գիտամեթոդական ամսագիր, N7.2010, Երևան 2010, էջ 64
8. Լ. Խոջայան, «Նախաշավիղ», «Ընտանիք-դպրոց համագործակցություն», N1.2017, Երևան 2017, էջ 64

9. Պետրովսկի Ա. Վ. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», Լույս Եր. 1977թ, 397 էջ
10. Սմբատյան Լ.,«Դպրոց ընդունվող երեխայի ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը», ԿԳՆ «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր , Երևան 2011, 64էջ
11. Սուխոմլինսկի Վ. Ա. «Ինչպես դաստիարակել իսկական մարդ», Լույս, Եր. 1980թ, 337 էջ
12. ՀՀ Սահմանադրություն «Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999 245էջ:
13. Азаров Ю.П. Семейная педагогика. – Спб.: Питер, 2011.–400 с.
14. В.А., Родители и дети: взаимоотношение или отчуждение, М., изд. “Просвещение”, 1996г., 191 с.
15. Вознесенская Е.Л., Социально-психологическая адаптация семей с детьми, Минск, 2003г., 183-184 с.
1. Выготский Л.С., Детская психология, собр. соч., том 6, М., 1984, 432 с.
2. Голдингер М.Н., Родители и дети в социальной среде, М., изд. “Знание”, 2001г., 323 с.
3. Зверева О.Л., Кротова Т.В., Ганичева А.Н. Семейная педагогика и домашнее воспитание детей раннего и дошкольного возраста: учебное пособие. – М.: Сфера, 2009. – 256 с.
4. Каптерев П. Ф. о семейном воспитании: учеб. пособие / сост. И .Н.Андреева. М.: Академия, 2000. - 168 с.
5. Москвина Н.И. Взаимодействие семьи и школы/Н.И. Москвина // Классный руководитель, 2005. - №5. - С.102 – 107